

ՊԱՇՏՈՆ ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ

[Որ կատարի զկնի «Որ օրհնես զայնոսիկ» աղօթից, յաարտ Սուրբ Պատարագի, ըստ խնդրանաց ազգականաց կամ բարեկամաց ննջեցելոց ի Քրիստոս:]

Սարկաւագն քարոզեսցէ.

Եւ եւս խաղաղութեան զՏէր ազաչեսցուք:

Ընկալ, կեցո՛ր եւ ողորմեա՛:

Քահանայն դիցէ զխունկ ի բուրվառն եւ ասասցէ.

Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Դպիրքն երգեսցեն.

[Ծարական Հանգստեան Ծաշու. ԲԿ.]

Որ յանէից ստեղծող գոյից արարչակից Հօր Բանդ Աստուած-
թողութիւն շնորհեա՛ ննջեցելոց քոց ծառայից, յորժամ գաս դատել զոր
անարատ ձեռօք ստեղծեր:

Որ ի Հօրէ առաքեցար եւ մարմնացար ի սուրբ Կուսէն. թողութիւն
շնորհեա ննջեցելոց քոց ծառայից, յորժամ գաս դատել զոր անարատ
ձեռօք ստեղծեր:

Որ ի խաչին անշնչացար զմահու լուծեր գիշխանութիւն. թողութիւն
շնորհեա ննջեցելոց քոց ծառայից, յորժամ գաս դատել զոր անարատ
ձեռօք ստեղծեր:

Որ պսակիչդ ես քոց սրբոց եւ անվախճան բարեաց բաշխող. թողութիւն
շնորհեա՛ ննջեցելոց քոց ծառայից, յորժամ գաս դատել զոր անարատ
ձեռօք ստեղծեր:

[Ծարական Մեծացուցէ. ԲԿ.]

Մայր լուսոյն, Մարիամ անհարսնացեալ, օրհնեալդ ի կանայս:

Լոյսն անստուեր յարգանդի կրեցեր, օրհնեալդ ի կանայս:

Մի՛ դադարիր վասն մեր բարեխօսել, օրհնեալդ ի կանայս:

[Ծարական Խաչի. ԲԿ.]

Ի վերայ վիմի հաւատոյ շինեցեր զքո սուրբ զՆկեղեցի. գաս պահեա՛
ի խաղաղութեան:

Որ շնորհեցեր ողորմութիւն ի բնակարանս հրեշտակաց եւ մարդկան
բաւարան. տուր սմա զանշարժ քո զխաղաղութիւն:

Ի տաճարի փառաց սրբութեան քո քեզ երգեն մանկունք. տուր սոցա
զառատ քո զողորմութիւն:

Դպիրքն.

Սաղմոս ԾԻԹ.

Ի խորոց կարդացի առ քեզ, Տէր. Տէր, լո՛ւր ձայնի իմում:
Եղիցին ականջք քո ի լսել զձայն աղօթից իմոց:
Թէ՛ զանօրէնութիւնս իմ քննես, Տէր. Տէր, իսկ ո՞ր կարէ կալ առաջի քո,
զի ի քէն է քաւութիւն:

Վասն անուան քո համբերի, Տէր, համբեր անձն բանի քում. յուսացաւ
անձն իմ ի Տէր:

Ի պահէ առաւօտու մինչեւ յերեկոյ. ի պահէ առաւօտու յուսացաւ
Իսրայէլ ի Տէր:

Ի Տեառնէ է ողորմութիւն բազում. ի նմանէ է փրկութիւն եւ նա
փրկեաց զԻսրայէլ յամենայն նեղութեանց նորա:

Սարկաւագն.

Ալէլուիա. օրթի:

Քահանայն.

Խաղաղութիւն ամենեցուն:

Դպիրքն.

Եւ բնդ հոգւոյդ քում:

Սարկաւագն.

Երկիւղածութեամբ լուարուք:

Քահանայն.

Մբբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ Մատթէոսի:

Դպիրքն.

Փառք քեզ, Տէր Աստուած մեր:

Սարկաւագն.

Պոռսխումէ:

Դպիրքն.

Ասէ Աստուած:

Քահանայն.

ԲԱ. և ԴԱ.

Մատթ. ԺԱ. 25-30.

Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Յայնմ ժամանակի պատասխանի ետ Յիսուս եւ ասէ. զոհանամ զքէն
Հայր, Տէր երկնի եւ երկրի, զի ծածկեցեր զայս յիմաստնոց եւ ի գիտնոց
եւ յայտնեցեր տղայոց. այո՛ Հայր, զի այսպէս Հաճոյ եղեւ առաջի Բո:

Ամենայն ինչ տուաւ ինձ ի Հօրէ իմմէ. եւ ոչ ոք ճանաչէ զՈրդի եթէ
ոչ Հայր. եւ ոչ զՀայր ոք ճանաչէ՝ եթէ ոչ Որդի եւ ում Որդին կամիցի
յայտնել:

Եկայք առ իս ամենայն վաստակեալք եւ բռնաւորք եւ ես հանգուցից զձեզ. առէ՛ք զլուծ իմ ի ձեզ եւ ուսարուք յինէն, զի հեզ եմ եւ խոնարհ սրտիւ. եւ գտջիք հանգիստ անձանց ձերոց, զի լուծ իմ քաղցր է եւ բռն իմ փոքրոգի:

[Աւետարանք որ զկնի՝ ընթերցցին փոխանակ վերնոյն, ըստ ձայնից.

ԲԶ. եւ ԴԶ. Մարկոսի Դ. 28-34:

ԱԿ. եւ ԴԿ Դովասու ԺԲ. 32-40:

ԱԶ եւ ԳԶ. Յովհաննու ԺԲ. 24-26:]

Ապա Դպիրքն երգեսցեն ըստ ձայնից զմի ի տանց «Աստուած Անեղ» երգոյն, զոր արարեալ է Տեսան Ներսիսի վասն ննջեցելոց ի Քրիստոս:

ԲԿ. եւ ԴԿ.

Գերագոյն շնորհաց բաշխող երկնաւորաց եւ երկրայնոց, Կեանք եւ կենաց տըւող Հոգի, Հօր եւ Որդւոյ արարչակից. Խնդրեմք ի քէն, աղբի՛ւր բարեաց, արքուցանողդ ծարաւեաց, Ողորմեա՛ ըստեղծուածոյս՝ յուսով ի քեզ ննջեցելոյս:

ԲԶ. եւ ԴԶ.

Կեանք ի կենաց, լոյս ի լուսոյ, որ ըստեղծեր զմեզ ի հողոյ, Նորոգեցիր դարձեալ կրկին ծննդեամբ սրբոյ աւագանին. Զոր կեցուցեր շնորհիւ քոյին ի մահուանէն այն առաջին, ի յօթեանս Հօր քո լուսոյ ըզննջեցեալլս մեր հանգո՛:

ԱԿ. եւ ԳԿ.

Ուրախութեամբ զօրք երկնային յերկնից յերկիր իջանէին՝ Յորժամ յարեար ի մեռելոց, լոյս ծագեցար արարածոց. Սուրբ յարութեամբ քո կենարար յարո՛ ըզսա ի կեանս անմահ, Լի լապտերօք մոյծ յառազաստ ընդ իմաստուն սուրբ կուսանացն:

ԱԶ. եւ ԳԶ.

Քահանայք եւ ժողովուրդք հայցեմք ի քէն, Տէր բարեգութ, Ընդ ննջեցեալսն հաւատով ընկա՛լ ըզմեզ նովին յուսով. յերուսաղէմ քաղաք վերին, յորում արդարքըն ժողովին, Փառս վերերգել միշտ ընդ նոսին՝ Երրորդութեանդ երբեակ անձին:

Եւ Դպիրքն երգեսցեն եւ որ զկնի՝ ըստ պատշաճի ատուրն.

Կիրակէից եւ Յարութեան.

Ուրախացան ազգքք մարդկան, յորժամ լուան զքո յարութիւնդ, Նորափետուր զարդարեցան ի յարութեան սուրբ Միածնիդ. Ողորմած Տէր, ողորմեա՛ հոգւոցըն մեր նընջեցելոց:

Եւ կամ զայս.

Արքոց եւ Հինգշարթի.

Արարիչ եւ մարդասէր, անոխակալ եւ բարեգութ, Որ զովիսդ ի սրովբէից՝ Տէր դատաւոր արդարութեան, Ընդ սրբոց առաքելոց, Տէր, պսակեա՛ զմեր ննջեցեալսն՝ Ողորմած Տէր, ողորմեա՛ հոգւոցըն մեր ննջեցելոց:

Եւ կամ զայս.

Երկշարթի.

Ի վերին Երուսաղէմ, ի բնակարանքս հրեշտակաց, Ուր Ենովք եւ Եղիաս կան ծերացեալ աղաւնակերպ, Ի դրախտին Եղեմական պայծառացեալ արժանապէս՝ Ողորմած Տէր, ողորմեա՛ հոգւոցըն մեր ննջեցելոց:

Ապա Քահանայն ասացէ.

Հոգւոցն հանգուցելոց, Բրիստոս Աստուած, արա՛ հանգիստ եւ ողորմութիւն. եւ մեզ մեղաւորացս շնորհեա՛ զթողութիւն յանցանաց:

Սարկաւագն.

[Բարոզ Հոգեհանգստեան]

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք. Վասն հանգուցեալ հոգւոցն աղաչեսցուք զՓրկիչն մեր Բրիստոս, զի զնոսս ընդ արդարսն դասեսցէ եւ զմեզ կեցուցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ.

Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո՛ եւ ողորմեա:

Քահանայն ասացէ.

[Աղօթք Հոգեհանգստեան]

Տէր, ողորմեա՛. Տէր, ողորմեա՛. Տէր, ողորմեա՛:

Բրիստոս, որդի Աստուծոյ, անոխակալ եւ բարեգութ, զթա՛ քո արարչական սիրովդ ի հոգիս հանգուցեալ ծառայից քոց. մանաւանդ ի հոգիս (այս անուն). յիշեա՛ յաւուր մեծի գալստեան արքայութեան քո. արա՛ արժանի ողորմութեան, քաւութեան եւ թողութեան մեզաց. դասաւորեալ պայծառացո՛ ընդ սուրբս քո յաջակողմեան դասուն: Զի դու եւս Տէր եւ արարիչ ամենեցուն, դատաւոր կենդանեաց եւ մեռելոց: Եւ քեզ վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Սարկաւագն.

[Բարոզ Սայի]

Սուրբ խաչիւս աղաչեսցուք զՏէր զի սովաւ փրկեսցէ զմեզ ի մեղաց եւ կեցուցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ:

Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո՛ եւ ողորմեա՛:

Քահանայն.

[Աղօթք Խաչի]

Պահպանեա՛ զմեզ, Քրիստոս Աստուած մեր, ընդ հովանեալ սուրբ եւ պատուական խաչիւղ քով ի խաղաղութեան. փրկեա՛ յերևելի եւ յաներեւոյթ թշնամոյն. արժանաւորեա՛ զոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Հօր եւ ընդ Հոգւոյդ Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Եւ դարձեալ ասասցէ.

Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս: Ամէն:

Եւ ասասցեն.

[Աղօթք Տէրունական]

Հայր մեր որ յերկինս ես ...

Սարկաւազն.

Օրհնեցից զՏէր յամենայն ժամ. յամենայն ժամ օրհնութիւն նորա ի բերան իմ:

Քահանայն.

[Արձակումն]

Օրհնեալք եղբրուք ի շնորհաց Սուրբ Հոգւոյն:

Երթալք խաղաղութեամբ եւ Տէր եղիցի ընդ ձեզ, ընդ ամենեսեանդ: Ամէն:

Եւ երթիցեն ի խաղաղութիւն:

